ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ
14 ապրիլի, 1995թ.

14 ապրիլի, 1995թ. **ք.Երևան**

Ապրիլի 14-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետական կուսակցության Համաժողովը, որին հրավիրված էր 33 պատգամավոր: Համաժողովի նախագահ ընտրվեց ՀՀԿ Խորհրդի նախագահ Ա.Մարգարյանը, որը համագումարի հաստատմանը ներկայացրեց ՀՀԿ Խորհրդի (1995թ. ապրիլի 6-ի) նիստի կողմից Համաժողովին առաջադրվող օրակարգը.

1. **ՀՀԿ գործունեությունը 1992թ. մարտ ամսի ՀՀԿ ընդհանուր ժողովից հետո**
   Զեկ. ՀՀԿ նախագահ Ա.Նավասարդյան

2. **ՀՀԿ ծրագրային հիմնադրույթների և կանոնադրական փոփոխությունների հաստատում**
   Զեկ. ՀՀԿ Խորհրդի անդամ, կազմակերպչական հանձնաժողովի նախագահ Ռ.Զոհրաբյան

3. **ՀՀԿ նախընտրական ծրագրի հաստատում**
   Զեկ. ՀՀԿ Խորհրդի անդամ քաղաքական հանձնաժողովի նախագահ Գ.Մինասյան

4. **ՀՀ Ազգային Ժողովում ՀՀԿ պատգամավորության թեկնածուների հաստատում**
   Զեկ. ՀՀԿ նախագահ Ա.Նավասարդյան

5. **Հայոց եղեռնի 80-ամյակի առթիվ ՀՀԿ համաժողովի հայտարարություն**
   Զեկ. ՀՀԿ խորհրդի անդամ Տ.Թորոսյան

1992թ. մարտի ՀՀԿ-ի Ընդհանուր Ժողովից հետո ՀՀԿ-ի գործունեության մասին զեկուցումով հանդես եկավ ՀՀԿ նախագահ Ա.Նավասարդյանը:

ՀՀԿ 5-ամյակի առթիվ շնորհավորանքի խոսք հղելով կուսակցության անդամներին, նա անդրադարձավ ՀՀԿ Ընդհանուր ժողովի կայացրած որոշումներին:

Զեկուցողը նշեց, որ 1992թ. մարտի ՀՀԿ Ընդհանուր Ժողովից հետո Կուսակցությունը մասնակցություն է ունեցել քաղաքական կոնկրետ իրադրությունների հրամայականով ստեղծված որոշ միավորումների գործունեությանը: Ակտիվ մասնակցություն է ցուցաբերել «Ազգային դաշինք» միավորման գործունեությանը: Այդ դաշինքը ստեղծվել էր Ղարաբաղյան իրադարձությունների հրամայականով եւ նպատակ ուներ թույլ չտալ, որպեսզի ԳԽ-ում Ղարաբաղը Ադրբեջանի կազմում ճանաչելու որևէ որոշում կայացվի:

ԳԽ-ին Սահմանադրության այլընտրանքային տարբերակ ներկայացնելու նպատակով ստեղծվեց վեցյակի քաղաքացիական համաձայնության խորհուրդը (Սահմանադրական դաշինք): ՀՀԿ-ն ակտիվ մասնակցություն ունեցավ Սահմանադրության մշակման և այն հասարակայնությանը ներկայացնելու գործում: Սահմանադրության այդ տարբերակը, որպես այլընտրանքային տարբերակ, ներկայացվեց ԳԽ-ին: ԳԽ-ը համալրեց կուսակցությունների ներկայացուցիչներով արդեն գործող Սահմանադրական հանձնաժողովի կազմը և հանձնարարեց ստեղծել Սահմանադրություն՝ ԳԽ-ին ներկայացված Սահմանադրությունների տարբերակների հիման վրա: Փաստորեն, Սահմանադրական Դաշինք միավորումը իր առջև դրված խնդիրը կատարեց: ՀՀԿ-ն այդ պատճառով դուրս եկավ միավորումից (չնայած որ որոշ

մասնակից կուսակցություններ ցանկություն էին հայտնել պահպանելու այդ միավորումը՝ այն քաղաքականացնելով): Միավորումից ՀՀԿ-ի դուրս գալը ուղեկցվեց այդ միավորման տրոհմամբ:

ՀՀԿ նախագահը նշեց, որ ՀՀԿ-ին այս տարիների ընթացքում չհաջողվեց իր շուրջը հավաքել բոլոր ազգայնական ուժերին և դառնալ Հայաստանում 3-րդ քաղաքական ուժը:

ՀՀԿ-ն միացել է «Աջ ուժերի դաշինք» միավորմանը, ուր նախընտրական արշավին դաշինքով հանդես գալու առաջարկություն է եղել:

Մոտակա ընտրությունների կապակցությամբ ՀՀԿ-ն արդեն մշակել է իր նախընտրական ծրագիրը և հրապարակել է մամուլում («Հանրապետական» և «Երկիր Նաիրի» թերթերում):

ՀՀԿ-ն ԳԽ-ում, ցավոք, տնտեսությանը վերաբերվող առաջարկություններով հանդես չի եկել, բայց ակտիվ մասնակցություն է ունեցել մի շարք օրենքների մշակմանը (հռչակագրի, լեզվի, կրթության, հասարակական կազմակերպությունների, հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին օրենքների, զինվորական համազգեստի, շքանշանների):

Զեկուցողը խոսեց կուսակցության կազմակերպչական հարցերից: Նա նշեց, որ ՀՀԿ-ն ստեղծվել է «Անկախության Բանակ» ռազմաքաղաքական միավորման հիմքի վրա, հետագայում քաղաքական իրադրության թելադրանքով դարձել է զուտ քաղաքական կազմակերպություն: Այս փոփոխության պատճառով շատ անդամներ հեռացան կուսակցությունից: ՀՀԿ-ի շարքերը համալրում են նորերը: Ստեղծվել, գործում և հզորանում է «Ցեղակրոն դաշինք» կազմակերպությունը:

ՀՀԿ-ն հրապարակում է «Հանրապետական» թերթը, որը կատարում է իր առջև դրված նպատակները, չնայած որ առկա են հրատարակման պարբերականության և այլ հարցերի հետ կապված դժվարություններ:

ՀՀԿ-ն մշակել և հաստատել է ՀՀԿ ծրագիրն ու կանոնադրությունը:

ՀՀԿ-ն հեղինակ է մի շարք միջոցառումների:

ՀՀԿ-ի գործունեությունը կազմակերպչական առումով ՀՀԿ նախագահը գնահատեց բավարար:

ՀՀԿ ծրագրային հիմնադրույթների և կանոնադրական փոփոխությունների հաստատման հարցի կապակցությամբ զեկուցումով հանդես եկավ Ռ.Զոհրաբյանը:

Նա նշեց, որ ՀՀԿ-ի ծրագրային հիմնադրույթների և կանոնադրական փոփոխությունների շուրջը կուսակցությունում մոտ մեկ տարվա քննարկում է անցկացվել: ՀՀԿ Խորհուրդը ՀՀԿ Համաժողովին առաջարկում է հաստատել ՀՀԿ ծրագրային հիմնադրույթները և կանոնադրական փոփոխությունները:

ՀՀԿ համաժողովի որոշումը ՀՀԿ Ծրագրային հիմնադրույթների և կանոնադրական փոփոխությունների մասին

ՀՀԿ համաժողովը, քննարկելով ՀՀԿ ծրագրային հիմնադրույթները և կանոնադրական փոփոխությունները,

որոշեց

ա) հաստատել ՀՀԿ Ծրագրային հիմնադրույթները և կանոնադրական փոփոխությունները,

բ) ՀՀԿ ներկայացուցչական ժողովին լիազորել տեղական ինքնակառավարման մարմինների առաջիկա ընտրություններին ՀՀԿ թեկնածուների և նրանց նախընտրական ծրագրերի հաստատումը:

ՀՀԿ նախընտրական ծրագրի մասին զեկուցումով հանդես եկավ Գ.Մինասյանը:

Նա նշեց, որ գալիք ընտրությունների հետ կապված այս տարվա հունվարից հետո հարց բարձրացվեց ստեղծել ՀՀԿ-ի նախընտրական ծրագիրը: Աշխատանքներ են տարվել նախընտրական ծրագրի մշակման ուղղությամբ: Այն այսօր պատրաստ է և արդեն հրապարակվել է «Հանրապետական» թերթում (1995թ. փետրվարի համարում) : Այս ծրագիրը չի հակադրվում ՀՀԿ կուսակցության ծրագրին: Այն իր մեջ ներառել է ՀՀԿ-ի ծրագրային կետերը: Այս նախընտրական ծրագիրը, ըստ էության, ՀՀԿ ծրագրի տեղայնացված տարբերակն է ժամանակի իմաստով:

Ներկայացված նախընտրական ծրագիրը դրվեց հաստատման:

ՈՐՈՇՎԵՑ

Հաստատել ՀՀԿ նախընտրական ծրագիրը:

Զեկուցումով հանդես եկավ ՀՀԿ նախագահ Ա.Նավասարդյանը:

Նա նշեց, որ այսօր կուսակցության առջև Ազգային Ժողովի ընտրություններին կուսակցության մասնակցության հարցն է դրված: Հայտնեց, որ ՀՀԿ-ն մասնակցում է «Հանրապետություն» ընտրական միավորման աշխատանքներին և բերեց մասնակցության իր հիմնավորումը: Կուսակցությունը իր ծրագրերը իրականացնելու համար պետք է շատ տեղեր ունենա ԳԽ-ում: Քանի որ կուսակցությունը առ այսօր չկարողացավ իր շուրջը համախմբել ազգային բոլոր ուժերին, որը կնպաստեր նրա հզորացմանը և Հայաստանում 3-րդ քաղաքական ուժ դառնալուն (ավանդական ուժերից տարբեր), հետևաբար անիմաստ է այսօր ընտրության հարցում միայնակ գնալ: Ձախ ուժերի հետ համագործակցությունը այս հարցում նպատակահարմար չէ, քանի որ հայտնի չէ նրանց հեռահար նպատակները:

«Հանրապետություն» դաշինքի խնդիրներն ընդունելի են: Նպատակահարմար է մասնակցել այս դաշինքի աշխատանքներին:

Ընտրությունների մասին օրենքը ԳԽ-ում արդեն ընդունվել է: (190 տեղ է հատկացվում, որից 40-ը համամասնական սկզբունքով, 150-ը՝ անհատական):

Նա հայտնեց, որ տեղերի բաժանման հարցով «Հանրապետություն» ընտրական միավորումում բանակցությունները շարունակվում են:

Համաժողովի նախագահը խնդրեց ներկաներին արտահայտվել «Հանրապետություն» ընտրական միավորմանը ՀՀԿ-ի մասնակցության կապակցությամբ:

Արտահայտվեցին ՀՀԿ անդամ Յ.Բախշյանը, ՀՀԿ Խորհրդի նախագահ Ա.Մարգարյանը: Նրանք հայտարարեցին, որ ճիշտ են համարում ՀՀԿ-ի մասնակցությունը «Հանրապետություն» ընտրական միավորումում:

Առաջարկություն եղավ հավանություն տալ ՀՀԿ-ի մասնակցությանը «Հանրապետություն» ընտրական միավորմանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀԿ համաժողովի որոշումը Ազգային Ժողովի ընտրություններին կուսակցության մասնակցության մասին

ՀՀԿ համաժողովը, քննարկելով Ազգային Ժողովի ընտրություններին կուսակցության մասնակցության հարցը,

որոշեց.

ա) հավանություն տալ կուսակցության մասնակցությանը «Հանրապետություն» ընտրական միավորմանը,

բ) հաստատել ՀՀԿ նախընտրական ծրագիրը,

գ) Ազգային Ժողովի մեծամասնական ընտրություններին ներկայացնել հետևյալ թեկնածուներին՝
Նավասարդյան Աշոտ
Բախշյան Յուրի
Սահակյան Գալուստ
Աղաբաբյան Աշոտ
Գևորգյան Արմեն,

դ) Ազգային Ժողովի համամասնական ընտրություններին ներկայացնել հետևյալ թեկնածուներին՝
Նավասարդյան Աշոտ
Մարգարյան Անդրանիկ

Մինասյան Գագիկ
Թորոսյան Տիգրան
Լալայան Մուշեղ
Մանուկյան Սերգեյ
Զոհրաբյան Ռազմիկ
Գագյան Գագիկ,

ե) ՀՀԿ խորհրդին լիազորել հետագայում, իրավիճակի փոփոխության դեպքում, մասնակի փոփոխություններ մտցնել գ) և դ) կետերում նշված պատգամավորության թեկնածուների ցուցակներում:

ՀՀԿ Խորհրդի անդամ Տ.Թորոսյանը Համաժողովին ներկայացրեց Հայոց եղեռնի 80-ամյակի կապակցությամբ ՀՀԿ Խորհրդի պատրաստած հայտարարության տեքստը և առաջարկեց այն հրապարակել որպես Համաժողովի հայտարարություն:

Համաժողովը հավանություն տվեց այս առաջարկությանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետական կուսակցության համաժողովի որոշումը

Հայաստանի Հանրապետական կուսակցությունը մասնակցում է ՀՀ Ազգային Ժողովի համամասնական ընտրական համակարգով ընտրություններին «Հանրապետություն» միավորման կազմում:

Համաժողովի նախագահ՝ **Ա.Մարգարյան**

Քարտուղար՝ **Հ.Դիլանյան**

14 ապրիլի, 1995թ.